

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԸ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Որքան էլ զարմանալի թվա, պետք է խոստովանել, որ հայ ազգային կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ունեցած դերն ու նշանակությունը գեղարվեստորեն իմաստավորելիս հայոց բանաստեղծական քանքարը շատ հազվադեպ է դիմել շարական երգի տեսակին: Ձիգ ժամանակներում ստեղծվել են բազմաթիվ տաղեր, գանձեր, ողբեր, ներբողյաններ եւ այլն: Բայց ամբողջ «Շարակնոց» ժողովածուում ընդամենը մի կանոն կա, որ արձագանքում է Կաթողիկե Մայր Եկեղեցու հիմնադրման եւ հայոց քահանայապետական Աթոռի հաստատման պատմական իրողությանը: Դա «Շողակաթի» կանոնն է:

Ավանդույթը «Շողակաթի» կանոնը Խաչին ու Եկեղեցուն վերաբերող կանոնների հետ միասին վերագրում է Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսի (կթղ. 677 -703 թթ.) գրչին, այսինքն՝ Է դարին: Վերագրումն ըստ ամենայնի հավանական է, եթե հաշվի ենք առնում ժամանակաշրջանի քաղաքական կացությունը, երբ ի հակակշիռ հայ քրիստոնեության նկատմամբ արաբական խալիֆայության գործադրած անասելի բռնությունների, հայոց կողմից բնականաբար պետք է ձեւավորվեր եւ ինքնապաշտպանական կարեւոր նշանակություն ստանալ ազգային արժեքների գերակայության գիտակցությունը:

«Շարակնոցը» չունի «Կաթողիկե Սուրբ Էջմիածնին» նվիրված հատուկ կանոն: Բայց «Տոնացոյցը» ունի նույն անունով տոն՝ «Տոն Կաթողիկե Եկեղեցոյ՝ Սրբոյ Էջմիածնի»<sup>1</sup>: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ տվյալ տոնը «Տոնացոյց» է մտել «Շարակնոց» ժողովածուի վերջնական խմբագրությունից հետո, խմբագրություն, որ ԺԳ դարում իրականացրել են երաժշտագետ Գրիգոր Խուլն ու նշանավոր մատենագիր Գեւորգ վարդապետ Սկեռացին: Քանի որ նախապես «Շարակնոցում» գոյություն չի ունեցել հատուկ կանոն, ուստի «Կաթողիկե Եկեղեցոյ՝ Սրբոյ Էջմիածնի» տոնի համար շարականներ են ընտրվել «Շարակնոցի» տարբեր կանոններից, մասնավորապես՝ Շողակաթի, Խաչվերաց տոնի հինգերորդ օրվա, Ծննդյան երրորդ օրվա, Ննջեցելոց վերջին ձայն շարքի եւ Վարդավառի երրորդ օրվա կանոններից: Դրանք են «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի...» օրհնությունը (գձ), «Այսար պայծառ եւ սին լուսոյ...» հարցը իր գործատնով (գձ), «Անըսկիզբնական բանին Հօր բնակարան...» մեծացուցեն (գձ), «Էջ Միածինն ի Հօրէ» մանկունքը (ղկ), «Թագաւոր փառաց, Քրիստոս...» տերիերկնիցը (ղկ), «Աստուածածին Սուրբ Կոյս» մեծացուցեն (ղկ), «Որ յանըսկիզբն

<sup>1</sup> Տե՛ս «Տոնացոյց», ի տպարանի Սրբոյ Կաթողիկե Էջմիածնի, 1887=ՌՅԼԶ, էջ 124-125:

յէն անյեղապէս ծընեալ...» ողորմյան (ղկ) եւ «Այսար ուրախացեալ ցընծան...» ճաշուն (զձ) <sup>2</sup>:

Ամենայն հավանականությամբ «Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի» տոնը կազմավորվել է «Տոնացոյցի» մեջ է ներառվել կաթողիկոսական Աթոռը Վաղարշապատում վերահաստատվելուց հետո, բայց թե ստույգ կերպով ե՞րբ եւ ո՞ւմ նախաձեռնությամբ, հայտնի չէ: Փաստերի անգոյության պատճառով առայժմ անհնարին է կոնկրետ թվական կամ տոնը կարգավորող գործիչի անուն նշել: Համենայն դեպս վստահաբար կարելի է նշել, որ դա տեղի է ունեցել Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ընտրությունից ոչ շատ ուշ՝ նույն ԺԵ դարում:

Շողակաթի եւ Էջմիածնի Կաթողիկէի տոներին հատկացված շարականներում «Վաղարշապատ» կամ «Էջմիածին» տեղանունները ուղղակիորեն չեն հիշատակվում: Բայց այդ շարականների մի զգալի մասը տեղանվան իմաստի առումով որոշակիություն է ստանում «Մայր Եկեղեցի», «շող լուսոյ ի Հօրէ ծագեալ», «Կաթողիկէ Սուրբ Եկեղեցի», «սին լուսոյ» եւ նման բնույթի այլ արտահայտություններով, որոնք ակնհայտորեն աղերսակցվուն են Գրիգոր Լուսավորչի ազաթանգեղոսյան տեսիլքի մանրամասներին:

Ահա երկու օրինակ՝ ստեղծագործական կենդանի հյուսվածքի ձևով.

Լուսաւորեա՛, լուսաւորեա՛,  
Կաթողիկէ Եկեղեցի՛,  
Քանզի ի քէն շող աստուածեղէն  
Ի Հօրէ լուսոյ ծագեաց...<sup>3</sup>

Կամ՝

Այսօր սին լուսոյ  
Հովանի եղեւ մեզ ի բարձանց,  
Քանզի Թագաւորըն երկնաւոր  
Եկաւորի ի Սուրբ Եկեղեցի,  
Եւ զօրք հրեշտակաց ծաւալեալ,  
Տօնէն ընդ մարդկան,  
Փա՛ռք գալստեան Քո, Տէ՛ր<sup>4</sup> :

Վերոհիշյալ տոներին գործածվող ուրիշ շարականներ, որոնք թեպետև չեն բովանդակում այս կարգի տեղորոշիչ արտահայտություններ, բայց, առհասարակ դրվատելով Սուրբ Եկեղեցին ու սուրբ Խորանը, սրբության Սեղանը, Սուրբ Հոգու աղավանակերպ էջքը և այլն, ըստ էության, օրվա խորհրդի բացահայտ ազդեցությամբ կամ թելադրանքով արարողությանը ներկա հավատացյալ հասարակության կողմից

<sup>2</sup> «Շարական հոգևոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցոյս Հայաստանեայց», ի Ս. Էջմիածին, ՌՅԺ=1861, էջ էջ 462-463, 495, 33-34; 465; 689-690, 32, 460, 497:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 312:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 497:

ընկալվում են որպես հենց Կաթողիկե Սուրբ Էջմիածին Եկեղեցուն վեհացնող օրհնություններ:

Շողակաթի եւ Էջմիածնի Կաթողիկեի տոներին հատկացված շարականների մեջ իր ինքնատիպությամբ առանձնանում է «Էջ Միածինն ի Հօրէ...» սկսվածքով մանկունքը: Թերեւս «Շարակնոցում» դժվար է գտնել մի այլ այնպիսի բարձրարժէք երգ, որ ունենա սույն շարականի հակիրճ հորինվածքը եւ միաժամանակ օժտված լինի նման ընդգրկուն բովանդակությամբ.

Էջ Միածինն ի Հօրէ,  
Եւ լոյս փառաց՝ ընդ Նըմա,  
Չայնք հընչեցին  
Մանդարամետք անդընդոց:  
Տեսեալ ըզլոյս  
Մեծ հայրապետին Գրիգորի՝  
Պատմէր ցընծութեամբ  
Հաւատացեալ արքային:  
Եկայք շինեսցուք  
Սուրբ ըզխորանըն լուսոյ,  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս  
Ի Հայաստան աշխարհի<sup>5</sup>:

«Էջ Միածինն ի Հօրէ...» մանկունքում վարպետորեն խտացված են Գրիգոր Լուսավորչի տեսիլքի ծավալուն նկարագրությունները՝ ամենակարեւոր դրվագներով՝ Հայր Աստծու մոտից Միածին Որդու լուսափառ վայրէջքը, երկրի ընդերքում դժոխային մութ ուժերի խուճապահար աղաղակները, հրաշակերտ լույսի սյունը, որ ցնծագին բերկրանք է պարգևում Գրիգոր Հայրապետին, եւ նա լույսի սուրբ Խորան կառուցելու կոչ է անում դարձի եկած հավատացյալ արքային:

Կարելի է վստահությամբ արձանագրել, որ շարականին որոշակի նյութ ու ներշնչանք են հաղորդել ազաթանգեղոսյան տեսիլքի «...իջեալ այր մի ի կերպարանս լուսոյ» (§ 733), «...մեծ եւ անչափ դրրընդիւնքն հնչեցին ի սանդարամետս անդընդոց» (§ 735), «Արդ՝ եկայք պատմեսցուք ձեզ...» (§ 731), «Եւ արդ եկայք շինեսցուք...» (§ 756) ձեւակերպումները<sup>6</sup>, ինչպես եւ բովանդակային այլ գծեր:

«Էջ Միածինն ի Հօրէ...» մանկունքի առաջին երկու տողերը («Էջ Միածինն ի Հօրէ, // Եւ լոյս փառաց՝ ընդ Նըմա») միանգամայն հստակ են, ճշգրիտ եւ իրենց արտահայտած իմաստով լիովին համահունչ են Գրիգոր Լուսավորչի տեսիլքի բովանդակությանը: Մակայն նկատելի է, որ առաջին տողի ենթակա-ստորոցյալ բաղկացությունը («**Էջ Միածինն...**») ոմանք թյուրիմացաբար արտաբերում են միասնաբար, «**Էջմիածինն**»՝ մեկ բարդ բառի սկզբունքով, որպես տեղանուն: Սույն ընկալումը ի հայտ է ե-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 465:

<sup>6</sup> Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիֆլիս, 1909, էջ 383, 384, 381, 393:

կել նույնիսկ տպագիր գրականությունում<sup>7</sup>:

Նկատելի է, որ այսպիսի արտաբերման կամ ընթերցման պարագային ամբողջ տողն ինքնաբերաբար ստանում է

« Էջմիածինն՝ ի Հօրէ,

Եւ լոյս փառաց ընդ Նրմա...»

կազմությունը՝ մոտավորապես արտահայտելով «**Էջմիածինը Հայր Աստուծոց է ստեղծված, եւ փառքի լույսը Նրա հետ է**» իմաստը:

Սույն արտաբերումը կամ ընթերցումն իբրեւ գիտական մեկնակետ, անշուշտ, չունի իր հիմնավորումը եւ տրամագծորեն հակասում է Լուսավորչի տեսիլքի բովանդակությանը, հետևաբար նաեւ անընդունելի է: Բայց միաժամանակ, որպես բառախաղի նմանողությամբ կազմված խոսքի նմուշ, այն բավականին հետաքրքիր է, իսկ որպես Ամենայն Հայոց Մայր Եկեղեցու իրական նշանակության գնահատություն՝ միանգամայն ընդունելի է, վայելուչ ու ճշմարիտ:

---

<sup>7</sup> Տե՛ս «Տօնացոյց», ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, էջ 124, 125, 154, տե՛ս նաեւ «Տօնացոյց»-ի Կ. Պոլսի 1849 թ. հրատարակությունը, էջ 127, 158: **Գ. Ա. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980, էջ 132, 133: